

## ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

**08.07.2019թ. նիստին**

### **Մասնակցում էին՝**

ՀՀ ՎՊԽ նախագահ՝ Ս.Մնացականյանը,  
ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Վ.Դավթյանը,  
Ն.Բաղդասարյանը  
ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

### **Հրավիրված էին՝**

ՀՀ ՎԿ գլխավոր քարտուղար Ա.Հայրապետյանը,  
ՀՀ ՎԿ նախագահի խորհրդական Լ.Միրզոյանը,  
ՀՀ ՎԿ իրավաբանական բաժնի պետ Ս.Մելքումյանը,  
ՀՀ ՎԿ գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա.Ավագյանը:

### **Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.**

1. ՀՀ վիճակագրության պետական խորհրդի առաջիկա նիստի օրակարգում ընդգրկել «Հայաստանի Հանրապետությունում 2014թ. իրականացված գյուղատնտեսական համատարած հաշվառման արդյունքում ձևավորված գյուղացիական տնտեսությունների վիճակագրական ռեգիստրի անվանագրքով տվյալների՝ բաժին 2 «տնտեսության հոդերը», բաժին 3 «գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունը և բազմամյա տնկարկների տարածությունը» և բաժին 6 «գյուղատնտեսական կենդանիներ և թռչուններ», ինչպես նաև գյուղատնտեսական համատարած հաշվառման 1 ԳՀՀ հարցաթերթի հավելվածով հավաքագրված, բազան ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության փորձագետին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Ավագյան/*

### **Որոշեցին՝**

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի գյուղատնտեսության վիճակագրության բաժնին՝ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության փորձագետին տրամադրել 2014 թվականին իրականացված գյուղատնտեսական համատարած հաշվառման արդյունքում ձևավորված գյուղացիական տնտեսությունների վիճակագրական

ռեգիստրի անվանագերծված տվյալների (բաժին 2 «տնտեսության հողերը», բաժին 3 «գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունը և բազմամյա տնկարկների տարածությունը» և բաժին 6 «գյուղատնտեսական կենդանիներ և թռչուններ», ինչպես նաև գյուղատնտեսական համատարած հաշվառման 1-ԳՀՀ հարցաթերթի հավելվածով հավաքագրված) բազան:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված տվյալները կարող են օգտագործվել բացառապես հետազոտական նպատակներով և չեն կարող փոխանցվել այլ անձանց: Անվանական հարթության անվանագերծված տվյալները չեն կարող հրապարակվել, համադրվել այլ աղբյուրներից ստացված անվանական տվյալների հետ, ընդ որում նշվելու են բոլոր հրահանգավորված նյութերի աղբյուրները: Հետազոտություններից հետո անվանագերծված տվյալները ոչնչացվելու են:

*/Անհապական/*

### **Լսեցին՝**

2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 27-ի N 232-Ն, N 233-Ն, N 234-Ն, N 235-Ն, N 236-Ն, N 237-Ն, N 238-Ն, N 239-Ն, N 240-Ն, N 241-Ն և N 242-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/*

### **Որոշեցին՝**

Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 27-ի N 232-Ն, N 233-Ն, N 234-Ն, N 235-Ն, N 236-Ն, N 237-Ն, N 238-Ն, N 239-Ն, N 240-Ն, N 241-Ն և N 242-Ն որոշումները, որն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

*/Նորմատիվ/*

**12.07.2019թ. նիստին**

**Մասնակցում էին՝**

- ՀՀ ՎՊԽ նախագահ՝ Ս.Մնացականյանը,
- ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Վ.Դավթյանը,  
Ն.Բաղդասարյանը
- ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

**Հրավիրված էին՝**

- ՀՀ ՎԿ նախագահի խորհրդական Լ.Միրզոյանը,
- ՀՀ ՎԿ իրավաբանական բաժնի պետ Ս.Մելքունյանը,
- ՀՀ ՎԿ գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը,
- ՀՀ ՎԿ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների վիճակագրության բաժնի պետ Լ. Խաչատրյանիը,
- ՀՀ ՎԿ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը,
- ՀՀ ՎԿ տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Լ. Մարկոսյանը,
- ՀՀ ՎԿ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը,
- ՀՀ ՎԿ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ք. Պողոսյանը,
- ՀՀ ՎԿ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ.Կոյունջյանը,
- ՀՀ ՎԿ արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի պետ Ա. Ավետիսյանը,
- ՀՀ ՎԿ մարդահամարի վարչության պետ Վ.Գևորգյանը,
- ՀՀ ՎԿ աշխատանքի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Զ. Ավոյանը,
- ՀՀ ՎՏՀ ծրագրի աշխատուժի ընտրանքային հետազոտության ղեկավար Լ. Մաքսուդյանը,
- ՀՀ ՎԿ տվյալների բազայի մասնագետ-տեխնիկ Ս. Զեյնալյանը,
- ՀՀ ՎԿ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Կ.Շահբազյանը,
- ՀՀ ՎԿ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի *ավագ* վիճակագիր Ա.Վարդանյանը,  
«Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ծրագրի համակարգող Տ.Գևորգյանը,
- ՀՀ ՎԿ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Ն.Բաբոյանը,

ՀՀ ՎԿ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Ս. Մովսիսյանը,

ՀՀ ՎԿ գյուղատնտեսության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ռ.Վարդանյանը,

ՀՀ ՎԿ մարդահամարի վարչության պլանավորման և ծրագրամեթոդաբանական բաժնի պետ Գ. Մելիքսեթյանը,

ՀՀ ՎԿ մարդահամարի վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրավորման բաժնի պետ Ռ. Հովհաննիսյանը:

**Նիսպում լսվեցին հետևյալ հարցերը.**

**Լսեցին՝**

1. ««Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը» 20 թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ Ձև 29-ԳՏ (տարեկան) վիճակագրական հաշվետվության, ««Գյուղատնտեսական մշակաբույսերի փաստացի ոռոգված ցանքային տարածությունները և բազմամյա տնկարկների տարածությունները, դրանցից ստացված համախառն բերքը և միջին բերքատվությունը» 20 թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ Ձև 29-ԳՏ ոռոգված (տարեկան) վիճակագրական հաշվետվության, ««Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը» 20 թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ Ձև 29-ԳՏՀ (տարեկան) վիճակագրական ամփոփ հաշվետվության և ««Գյուղատնտեսական մշակաբույսերի փաստացի ոռոգված ցանքային տարածությունները և բազմամյա տնկարկների տարածությունները, դրանցից ստացված համախառն բերքը և միջին բերքատվությունը» 20 թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ Ձև 29-ԳՏՀ ոռոգված (տարեկան) վիճակագրական ամփոփ հաշվետվությունների ձևերն ու լրացման հրահանգները հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 37-Ն, թիվ 38-Ն, թիվ 39-Ն և թիվ 40-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Ավագյան/*

**Որոշեցին՝**

**հաստատել որոշումներն ըստ ներկայացված նախագծերի:**

*/Նորմատիվ/*

**Լսեցին՝**

**2. «ՀՀ վիճակագրական կոմիտեի մարզային և Երևան քաղաքի գործակալություններում 2020թ. մարդահամարի աշխատանքները համակարգողի պարտականություններն և աշխատանքների կատարման ուղեցույցը հաստատելու մասին» հարցը:**

*/Զեկուցող՝ Վ. Գևորգյան/*

**Որոշեցին՝**

**հաստատել որոշումն ըստ ներկայացված նախագծի**

*/Անհատական/*

**Լսեցին՝**

**3. «ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 08.07.2019թ. թիվ 19-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու՝ մասնավորապես. ի լրումն վերը նշված որոշմամբ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության փորձագետին տրամադրված բազզային, տրամադրել նաև 4-րդ «Տնտեսության հողերի (գյուղատնտեսական նշանակության, տնամերձ և այլ հողերի) առկայությունն այլ համայնքներում/բնակավայրերում» և 10-րդ «Գյուղատնտեսական մթերքի օգտագործում և վերամշակում» բաժինների անվանազերծված տվյալները տրամադրելու թույլտվության մասին» հարցը:**

*/Զեկուցող՝ Ա. Ավագյան/*

**Որոշեցին՝**

**թույլատրել Վիճակագրական կոմիտեի գյուղատնտեսության վիճակագրության բաժնին՝ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության փորձագետին տրամադրել 2014 թվականին իրականացված գյուղատնտեսական համատարած հաշվառման արդյունքում ձևավորված գյուղացիական տնտեսությունների վիճակագրական ռեգիստրի անվանազերծված տվյալների (բաժին 2 «Տնտեսության հողերը», բաժին 3 «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունը և բազմամյա տնկարկների տարածությունը», բաժին 4 «Տնտեսության հողերի (գյուղատնտեսական նշանակության, տնամերձ և այլ հողերի) առկայությունն այլ համայնքներում /բնակավայրերում», բաժին 6 «Գյուղատնտեսական կենդանիներ և թռչուններ» և բաժին 10 «Գյուղատնտեսական մթերքի օգտագործում և վերամշակում», ինչպես նաև գյուղատնտեսական համատարած հաշվառման 1-ԳՀՀ հարցաթերթի հավելվածով հավաքագրված) բազան:**

*/Անհատական/*

**Լսեցին՝**

**4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.**

**4.1. Հաղորդում՝ Ինդոնեզիայի Ջակարտա քաղաքում 2019 թվականի /10.06-15.06. հունիսի 10-ից 15-ը «Տնտեսական գլոբալիզացիայի վիճակագրություն և ավելացված արժեքի գլոբալ շղթայի քարտեզագրում» թեմայով տարածաշրջանային դասընթացին մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցողներ՝ Լ. Խաչատրյան, Ս. Մովսիսյան/*

**4.2. Հաղորդում՝ Ղրղզստանի Բիշքեկ քաղաքում 2019 թվականի հունիսի 11-ից 12-ը «20-րդ խմբի կադրերի մասնագիտական պատրաստման ռազմավարության կիրառումը, ԱՄԿ-ի և Ռուսաստանի Դաշնության համագործակցություն» ծրագրի շրջանակում կայացած «Վիճակագրական վերլուծություն որակավորված աշխատուժի պահանջարկը և մասնագիտական տեխնիկական կրթության համակարգի շրջանավարտները Ղրղզստանում» տեխնիկական ուսուցողական սեմինարին մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցող՝ Զ. Ավոյան/*

**4.3. Հաղորդում՝ Ուկրաինայի Կիև քաղաքում 2019 թվականի հունիսի 11-ից 12-ը «Մինչև 2030թ. վերջ դնել սովին և ապահովել բոլոր մարդկանց, մասնավորապես աղքատների և խոցելի իրավիճակներում գտնվող անձանց, այդ թվում՝ մինչև մեկ տարեկան երեխաների համար անվտանգ, սննդարար և բավարար սննդի մատչելիությունը ողջ տարվա ընթացքում» 2.1.2 կետի «Բնակչության շրջանում պարենային անապահովության գնահատման սանդղակի վրա հիմնված չափավոր կամ սուր պարենային անապահովության տարածվածությունը» ցուցանիշի վերաբերյալ վիճակագրական ուսումնական սեմինարին մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցողներ՝ Դ. Մարտիրոսովա, Լ. Մարկոսյան/*

**4.4. Հաղորդում՝ Կորեայի Դեջոն քաղաքում 2019 թվականի հունիսի 11-ից 12-ը «Ծերացման հարցեր և տարիքային բաշխումով վիճակագրական տվյալներ» խորագրով Թիչֆիլդի քաղաքային խմբի երկրորդ տեխնիկական հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցող՝ Կ. Կոյունջյան /*

**4.5. Հաղորդում՝ Թաիլանդի Բանգկոկ քաղաքում 2019 թվականի հունիսի 11-ից 13-ը Ասիայի և Խաղաղօվկիանոսյան երկրների համար համատեղ կազմակերպված «Գենդերային տվյալների տարածում. ազդեցիկ ուղերձների հաղորդումը՝ տվյալների օգտագործման խթան» խորագրով տարածաշրջանային աշխատաժողովին մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցող՝ Լ. Քալանթարյան/*

**4.6. Հաղորդում՝ Բելգիայի Բրյուսել քաղաքում 2019 թվականի հունիսի 17-ին «Ակտիվ ծերացման ինդեքս» խորագրով շահառուների հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցող՝ Գ.Գևորգյան/*

**4.7. Հաղորդում՝ Իսրայելի Երուսաղեմ քաղաքում 2019 թվականի հունիսի 17-ից 20-ը «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» բաղադրիչի շրջանակներում ուսուցողական այցին մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցողներ՝ Լ. Քալանթարյան, Զ. Ավոյան, Լ. Մախսուդյան, Ս. Զեյնալյան/*

**4.8. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնություն Մոսկվա քաղաքում 2019 թվականի հունիսի 18-ից 19-ը «ԱՊՀ վիճակագրական ենթակառուցվածքի կատարելագործում և ԱՊՀ Վիճկոմիտեի վեբ-պորտալի մշակում» նախագծով ուսուցողական սեմինարին մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցողներ՝ Վ. Դավթյան, Ա. Մարտիրոսյան/*

**4.9. Հաղորդում՝ Իտալիայի Հռոմ քաղաքում 2019 թվականի հունիսի 19-ին ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) կողմից ՊԳԿ-ի գլխամասային գրասենյակում կազմակերպված «Ռեսուրսների հարցերով գործընկերների կլոր սեղան» խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցող՝ Ա. Սաֆյան/*

**4.10. Հաղորդում՝ Ֆրանսիայի Փարիզ քաղաքում 2019 թվականի հունիսի 24-ից 25-ը «Էներգաարդյունավետությունը արդյունաբերությունում և երկարաժամկետ էներգետիկ պլանավորում» խորագրով էներգետիկ քաղաքական ֆորումին մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցող՝ Ա. Ավերիսյան/*

**4.11. Հաղորդում՝ Չեխիայի Պրահա քաղաքում 2019 թվականի հունիսի 24-ից 26-ը Զբոսաշրջության վիճակագրության վարման, աղբյուրների, ռեգիստրի ձևավորման և արդիականացման, հետազոտությունների կազմակերպման և անցկացման՝ Չեխիայի վիճակագրական գրասենյակի փորձի ուսումնասիրմանը նվիրված աշխատաժողովին մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցողներ՝ Բ. Պողոսյան, Կ. Շահբազյան, Ա. Վարդանյան, Տ. Գևորգյան/*

**4.12. Հաղորդում՝ Վրաստանի Թբիլիսի քաղաքում 2019 թվականի հունիսի 24-ից 28-ը «Տնտեսական ակտիվության ցուցանիշի (կարճաժամկետ պարբերականության ցուցանիշներ)» թեմայով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցողներ՝ Ն.Բարոյան, Ս.Մովսիսյան/*

**4.13. Հաղորդում՝ Ֆրանսիայի Փարիզ քաղաքում 2019 թվականի հունիսի 26-ից 28-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի 67-րդ հերթական լիակազմ նստաշրջան, ինչպես նաև նստաշրջանի ներքո «Տվյալների նոր աղբյուրներ, հասանելիությունն ու օգտագործումը» խորագրով ու «Ազգային վիճակագրական գրասենյակների նոր դերը՝ որպես վիճակագրության և տվյալների գրասենյակներ» խորագրով սեմինարներին մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցող՝ Ս.Մնացականյան/*

**4.14. Հաղորդում՝ Վրաստանի Թբիլիսի քաղաքում 2019 թվականի հունիսի 26-ից 27-ը Եվրամիության վիճակագրական ծառայության կողմից կազմակերպված Արևելյան գործընկերության փորձագիտական աշխատանքային խմբի 8-րդ հանդիպմանը (նվիրված մարդահամարներին և կացարանների հաշվառմանը) մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցողներ՝ Վ. Գևորգյան, Գ. Մելիքսեթյան, Ռ. Հովհաննիսյան/*

**4.15. Հաղորդում՝ Իտալիայի Միլան քաղաքում 2019 թվականի հունիսի 27-ից 28-ը Արևելյան գործընկերության Պլատֆորմ 4-ի 2017-2020թթ. աշխատանքային ծրագրի շրջանակում կազմակերպված «Հմտությունների կանխատեսման և համապատասխանեցման թվայնացված փոխակերպումներ՝ բարելավված հնարավորություններ սպառողների համար» խորագրով աշխատաժողովին մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցող՝ Լ. Քալանթարյան/*

**4.16. Հաղորդում՝ Լիտվայի Վիլնյուս քաղաքում 2019 թվականի հուլիսի 2-ից 3-ը Եվրամիության Վիճակագրական Ծառայության կողմից կազմակերպված Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների գյուղատնտեսության վիճակագրության վերաբերյալ աշխատանքային խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցող՝ Ռ. Վարդանյան/*

### **Որոշեցին՝**

**արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն**

*/Անհատական/*



**08.07.2019թ. նիստին**

**Մասնակցում էին՝**

- ՀՀ ՎՊԽ նախագահ՝ Ս.Մնացականյանը,
- ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Ա.Անանյան, Գ.Գևորգյան, Ա.Սաֆյանը, Վ.Դավթյանը,  
Ն.Բաղդասարյանը,
- ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

**Հրավիրված էին՝**

- ՀՀ ՎԿ գլխավոր քարտուղար Ա.Հայրապետյանը,
- ՀՀ ՎԿ նախագահի խորհրդական Լ.Միրզոյանը,
- ՀՀ ՎԿ իրավաբանական բաժնի պետ Ս.Մելքումյանը,
- ՀՀ ՎԿ գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա.Ավագյանը,
- ՀՀ ՎԿ տնային տնտեսությունների հետազոտություններ բաժնի պետ Լ. Մարկոսյանը,
- ՀՀ ՎԿ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ  
Լ. Խաչատրյանը,
- ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ  
Ա.Գրիգորյանը,
- ՀՀ ՎԿ աշխատանքի վիճակագրության բաժնի տվյալների բազայի մասնագետ-  
տեխնիկ Ս. Զեյնալյանը,
- ՀՀ ՎԿ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի գլխավոր  
մասնագետ Ս. Խաչատրյանը,
- ՀՀ ՎԿ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի գլխավոր  
մասնագետ Մ. Խաչատրյանը:

**Լսեցին՝**

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2017 թվականի հոկտեմբերի 16-ի «ՀՀ վիճակագրական կոմիտեի գյուղատնտեսության վիճակագրության ընտրանքային դիտարկման դաշտում ընդգրկված համայնքների՝ 186 բնակավայրերի» ցանկը հաստատելու մասին» թիվ 26-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:

*/Զեյնուգոյ՝ Ա.Ավագյան/*

**Որոշեցին՝**

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2017 թվականի հոկտեմբերի 16-ի ««ՀՀ վիճակագրական կոմիտեի գյուղատնտեսության վիճակագրության ընտրանքային դիտարկման դաշտում ընդգրկված համայնքների՝ 186 բնակավայրերի» ցանկը հաստատելու մասին» թիվ 26-Ա որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 6-րդ տողի 6-րդ սյունակում «Ջովունի (Նաիրիի շրջ.)» բառերը փոխարինել «Ակունք (Աբովյանի շրջ.)» բառերով:

*/Անհատական/*

**Լսեցին՝**

2. ««Անշարժ գույքի օտարման մասին» Ձև 1-օտարում (եռամսյակային) և «Որդեգրման մասին» Ձև 1-որդեգրում (կիսամսյակային) վիճակագրական ամփոփ հաշվետվությունների ձևերն ու լրացման հրահանգները հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 96 և 2005 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 35-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա. Գրիգորյան/*

**Որոշեցին՝**

հաստատել որոշումներն ըստ ներկայացված նախագծերի:

*/Նորմատիվ/*

**Լսեցին՝**

3. ««Գրանցված արտակարգ դեպքերի մասին» Ձև 1-արտակարգ դեպք (կիսամսյակային) և «Գրանցված ճանապարհատրանսպորտային պատահարներից տուժածներ» Ձև 1-ՃՏՊ (կիսամսյակային) վիճակագրական ամփոփ հաշվետվությունների ձևերն ու լրացման հրահանգները հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 221-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»» հարցը:

*/Զեկուցող՝ Ա. Գրիգորյան/*

**Որոշեցին՝**

հաստատել որոշումներն ըստ ներկայացված նախագծերի:

*/Նորմատիվ/*

**Լսեցին՝**

**4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.**

**4.1. Հաղորդում՝ Վրաստանի Թբիլիսի քաղաքում 2019 թվականի հուլիսի 11-ին Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերակցության (GIZ) «Հարավային Կովկասում եվրոպական ստանդարտների իրավական մոտարկումը» ծրագրի շրջանակներում կազմակերպված «Հողի սեփականություն և հսկողություն՝ գենդերային հավասարության հզորացման գործում իրավական շրջանակների դերը» թեմայով աշխատաժողովին մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցողներ՝ Լ. Մարկոսյան, Ս. Ջեյնայյան/*

**4.2. Հաղորդում՝ Ավստրիայի Վիեննա քաղաքում 2019 թվականի հուլիսի 15-ից 19-ը Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) վիճակագրական դեպարտամենտի հրավերով Արևելյան և Հարավ Արևելյան Եվրոպայի երկրների համար ազգային հաշիվների և գների վիճակագրության կատարելագործման ծրագրի շրջանակում կազմակերպված «Եռամսյակային ազգային հաշիվների կազմում» (JV 19.51) թեմայով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցող՝ Լ.խաչատրյան, Ս. Խաչատրյան, Մ. Խաչատրյան/*

**4.3. Հաղորդում՝ Թաիլանդի Բանգկոկ քաղաքում 2019 թվականի հուլիսի 17-ից 19-ը «Բնակչության և սոցիալական վիճակագրության հարցերով տարածաշրջանային համակարգող խմբի» երկրորդ հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցողներ՝ Կ. Կոյումջյան/*

**4.4. Հաղորդում՝ Վրաստանի Թբիլիսի քաղաքում 2019 թվականի հուլիսի 25-ից 26-ը «Ըստ սեռի վիճակագրություն, Կայուն զարգացման նպատակների (ԿՁՆ) մշտադիտարկման մարտահրավերներ և հնարավորություններ» խորագրով Միջազգային կոնֆերանսին նվիրված Վրաստանի ազգային վիճակագրական գրասենյակի 100-ամյակին և ըստ սեռի վիճակագրության հավաքագրման 20-ամյակին մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցող՝ Ս.Մնացականյան, Ա.Սաֆյան, Լ. Քալանթարյան/*

**Որոշեցին՝**

**արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն**

*/Անհատական/*

**15.08.2019թ. նիստին**

**Մասնակցում էին՝**

- ՀՀ ՎՊԽ նախագահ՝ Ս.Մնացականյանը,
- ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Վ.Դավթյանը,  
Ն.Բաղդասարյանը, Լ.Պետրոսյանը
- ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

**Հրավիրված էին՝**

- ՀՀ ՎԿ նախագահի խորհրդական Լ.Միրզոյանը,
- ՀՀ ՎԿ իրավաբանական բաժնի պետ Ս.Մելքումյանը:

**Լսեցին՝**

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 28-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու» և «Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի մարդահամարի գործառնական ստորաբաժանում ստեղծելու և դրա կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ս.Մելքումյան/*

**Որոշեցին՝**

ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության մարդահամարի գործառնական ստորաբաժանում ստեղծելու և դրա կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 28-Ն որոշումն և 2020 թվականի մարդահամարի նախապատրաստման և անցկացման նպատակով ստեղծել մարդահամարի գործառնական ստորաբաժանում՝ վարչության կարգավիճակով, հաստատել վարչության կանոնադրությունն ու կառուցվածքը՝ համաձայն հավելվածի, սահմանել, որ վարչությունը գործում է մինչև մարդահամարի աշխատանքների ավարտը՝ 2022 թվականի դեկտեմբերի 31-ը:

Սույն որոշումներն ուժի մեջ են մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

*/Նորմատիվ, Անհատական/*